ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-23/22 - 62-23

« 17 » 03 2023թ.

ք. Երևան

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Կարեն Սարգսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅՋԻՋԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Աստղիկ Գարգրցյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շենքերի մաքրման ծառայությունների մատուցում (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժ և տուգանք:

[illegible] գործընթաց սկսելու դեպքում

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 792 000 (յոթ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում [illegible] գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա,

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և ***տարածվում է 2023թ. փետրվարի 13-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև 2023թ. փետրվարի 28-ը ներառյալ:*** Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել [illegible] ներկայացվել է ոչ ուշ, քան

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«ԷՅՋԻՋԻ» ՍՊԸ
ՀՀ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5	ք. Երևան, Արշակունյաց պ./Շ/39/9/90
Հ/Հ 900011018695	ՀՎՀՀ 02263285
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀՀ 02698604	Հ/Հ 15100105981600
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
_____ Կ.Սարգսյան	_____ Ա. Գարգրցյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« » 2023թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-23/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության									
ՀՀ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	մատուցման		
							հասցեն	ժամկետը	
		Շենքերի մաքրման ծառայություններ							
1	**90911110/4**	**Շենքերի մաքրման ծառայություններ** **Կատարողը պարտավոր է ՀՀ էկոնոմիկայի նախարարության /Ա և Բ մասնաշենք/ կողմից զբաղեցվող՝ 9684.6 քմ. տարածքում /հարկերի քանակը՝ Ա մասնաշենք՝ 9 հարկ, Բ մասնաշենք՝ 5 հարկ/ իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝** ընդհանուր մակերեսը՝ 9684.6 ք/մ, ըստ հարկերի՝ **Ա մասնաշենք** 1.**768.11** 2. **544.7** 3. **849.91** 4. **677.45** 5. **677.44** 6. **669.47** 7. **665.9** 8. **680.91** 9. **633.1** **Բ մասնաշենք** 1.**768.11** 2. **544.7** 4. **849.91**	դրամ	792 000	1	792 000	ք. Երևան, Մ.Մկրտչյան 5	մինչև 2023թ. փետրվարի 28-ը ներառյալ:	

Աշխատասենյակներ և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ

(միջանցք, աստիճանավանդակ և այլն)՝ 9510.65ք/մ՝

24 սանհանգույց՝ 173.95 ք/մ ընդհանուր մակերեսով

1) Մշտական մաքրման ծառայություններ

- Միջանցքների, պատերի, առաստաղների, պատուհանների ապակիների, բռնակների, պատերի, վարդակների, դռների, ջեռուցման մարտկոցների, նկարների, օդորակիչների ապակեպատ դռների ապակիների և պատուհանագոգերի մաքրում

2) Ամենօրյա մաքրման ծառայություններ

- գրասենյակային ցանկացած տեսակի գույքի, համակարգիչների, այլ տեխնիկայի, ինչպես նաև գույքի վրայից մատնահետքերի, կեղտաբծերի, փոշու կամ այլ հետքերի մաքրում

- նախամուտքերի, միջանցքների (այդ թվում՝ միջանցքներում առկա կահույքի և տեխնիկայի, սենյակային բույսերի, կամ այլ գույքի), դահլիճների (ամբողջ գույքով), աստիճանավանդակների, ընդհանուր օգտագործման այլ տարածքների մաքրում,

- սանհանգույցների ամենօրյա (աշխատանքային օրվա ընթացքում 1.5 ժամը մեկ) իդեալական մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում, հայելիների մաքրում, փայլեցում, լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/

- աղբամանների դատարկում, մաքրում, աղբի տոպրակների տեղադրում աղբամանների համար, շենքից աղբի հեռացում,

- հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի, ուղեգորգի և այլն) մաքրում,

- նախամուտքի մաքրում, ձմռան ընթացքում նախամուտքից ձյան և մերկասառույցի հեռացում առնվազն կես ժամը մեկ:

3) Շաբաթական մաքրման

- սալիկապատ հատակների լվացում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ Mr. Proper կամ համարժեք նյութերով,

- հատակի (այդ թվում՝ մանրահատակի, սալիկապատ հատակի) լվացում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ Pronto կամ համարժեք նյութերով:

4) Ամսական մաքրման ծառայություններ

- սանհանգույցի սալիկների, պատերի, առաստաղների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ domestos կամ համարժեք նյութերով,

- տեղեկատվական վահանակների, նախամուտքի, աստիճանավադակների մաքրում, միջանցքների առաստաղների փոշեզրկում:

5) Տարեկան մաքրման ծառայություններ

- Ջահերի և լույսերի լվացում տարեկան երեք անգամ (մայիս, օգոստոս, դեկտեմբեր) /առավելագույն քանակը՝ 500 հատ/

- Շերտավարագույրների տեղում քիմ մաքրում տարեկան մեկ անգամ /առավելագույն քանակը՝ 2000 քմ/

- Վարագույրների լվացում, արդուկում (վարագույրների հանելը, տեղադրելը, տեխափոխումը իրականացվում է ծառայություն մատուցողի կողմից) տարեկան մեկ անգամ, /առավելագույն քանակը՝ 400 քմ/

- Գորգերի տեղում լվացում՝ քիմ մաքրում, տարեկան 2 անգամ, բարձր որակի նյութերով /առավելագույն քանակը՝ 200 քմ/

- Փափուկ կահույքի քիմիական մաքրում՝ բազմոց 3 տեղանոց /առավելագույն քանակը՝ 40 հատ/

- Փափուկ կահույքի քիմիական մաքրում՝ բազկաթոռ /առավելագույն քանակը՝ 50 հատ/

- Մուտքերի ֆասսադների լվացում տարեկան 2 անգամ

Անձրևային կամ ձյան եղանակին՝ մուտքերի և նախամուտքերի (300քմ շառավղով) մաքրում ձնից և մերկասառույցից՝ առնվազն 3 անգամ

		տեղումնառատ ամիսներին, ըստ անհրաժեշտության, նախամուտքերի առջև տեղադրել խոզանականման ծածկույթով գորգեր (նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ): Կատարողը պետք է վարչական շենքի սանհանգույցներում ապահովի հետևյալ տնտեսական ապրանքների ամենօրյա տեղադրումը. - Օդի թարմացուցիչ ավտոմատ կարգավորմամբ - հեղուկ օճառ՝ ոչ պակաս 1գ/սմ^3 խտությամբ - զուգարանի թուղթ՝ երկշերտ «Սոֆադ» կամ համարժեք - աղբի տոպրակներ աղբամանների համար Սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական երկուական սպիտակ գույնի առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ ախտահանող հեղուկ օճառի առկայություն: Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերը, մաքրման լաթերը և սարքավորումներն ամբողջությամբ պետք է ապահովվեն Կատարողի կողմից: Սանհանգույցների պատերից մեկի վրա՝ տեսանելի վայրում, պետք է փակցված լինի տվյալ ամսվա հերթապահության թերթիկը, որը պետք է լրացվի հերթապահությունն իրականացնող աշխատակցի կողմից՝ յուրաքանչյուր 2 ժամը մեկ: Կատարողը պետք է փոխհատուցի իր կողմից պատճառված նյութական վնասը: Կատարողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, շտկել իր կողմից չմատուցված ծառայությունը (ամենօրյա մաքրման ծառայությունները՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, շաբաթականը՝ մինչև շաբաթվա ավարտը, ամսականը՝ հաջորդող ամսվա 3-ը ներառյալ, եռամսյակայինը և տարեկանը՝ սահմանված ամսվանը							

		մշակումը՝ մեկ ժամվա ընթացքում): Ըստ անհրաժեշտության դահլիճներում խորհրդակցություններից առաջ և հետո տարածքի մաքրում: Կատարողը կամ իր կողմից լիազորված անձը պարտավոր է շաբաթական մեկ անգամ ստորագրել պատվիրատուի կողմից կազմված մաքրման ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկագիրը, որը ամփոփված՝ երկու կողմերի ստորագրության առկայությամբ յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը՝ պետք է ներկայացվի պատվիրատուին: Կատարողը պետք է իրականացնի Վարչական շենքերին պատկանող հարակից տարածքների մաքրում: Կատարողը պետք է մաքրման աշխատանքներն իրականացնի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 08:30, այդ ժամին Տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի ՀՀ էկոնոմիկայի նախարարության բնականոն աշխատանքային գործունեությունը և ենթարկվի ներքին կարգապահական կանոններին՝ վերաբերելի մասով. Կատարողն աշխատանքային օրերին պետք է ապահովի առնվազն 8 հոգու առկայություն առավոտյան ժամերին և առնվազն 2 հոգու հերթապահություն՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով: Տարածքի և այլ տեղեկատվության վերաբերյալ, մինչև հայտերի ներկայացումը, մասնակիցը կարող է մոտենալ մատնանշված հասցե և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ կատարվելիք աշխատանքների մանրամասների և հայտում նշված բնութագրերի վերաբերյալ:								

		պահպանմամբ: Աղբահանության կազմակերպումից հետո, անհրաժեշտության դեպքում, Կատարողը պետք է լվանա ճանապարհը և տարածքը: Աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման ժամանակացույցը, աղբամանների տեղադրման վայրերը և դրանց տեսակները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ: Տրամադրված աղբամանները ենթակա չեն վերադարձման:							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011018695
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար

_____ **Կ.Սարգսյան**
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅՋԻՋԻ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց պ./Շ/39/9/90
ՀՎՀՀ 02263285
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100105981600
Տնօրեն

_____ **Ա. Գարգրցյան**
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
« » 2023թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-23/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**90911110/4**	**Շենքերի մաքրման ծառայություններ**	0	0	792 000	792 000	792 000	792 000	792 000	792 000	792 000	792 000	792 000	792 000	792 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011018695
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար

Կ.Սարգսյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՅՋԻՋԻ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց պ./Շ/39/9/90
ՀՎՀՀ 02263285
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 15100105981600
Տնօրեն

Ա. Գարգրցյան
(ստորագրություն) Կ.Տ

Հավելված 3
« » 2023թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-23/22 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1

« » 2023թ. կնքված
ՀՀ ԷՆ-ՄԱԾՁԲ-23/22 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն